դական գահ ունենալու պատիւը Թագաւորէն յետոյ ։ Մարերուն Հայերու մէջ ձուլումի և կամ բնակակցութեան ու պետական կազմի ընկերակցութեան մէկ պատկերն է այս պատմուածը, որոնց յաջորդողներ շատ կան ։

Տիգրան Բ.ի ժամանակ՝ ըստ Հայ եւ օտար պատմիչներու. — *Մէտիան, Միջագետք, ինչպէս և Տիգրանակերտի վրայի մեծ ճանապարհը, ուր կը բնակուէին Թափառաշրջիկ ու վայրենի ցեղերը, Հայոց Տիգրանը կը կամենայ զանոնք քաղաքակրթել մտցնելով կուլտուրա ու ճարտարարուեստ ։ Այնտեղ կը բերէ օտար ցեղեր ինչպէս և Հելլէններ ու Արաբներ. Տիգրանակերտը որ Հայերու ու Մարերու կռուի դաշտն էր եղած, ատոր մեծ ճանապարհը կը մաքրէ Թափառական և աւազակ ցեղերէ (հաւանականօրէն այժմեայ Քիւրդերու նախնիներէն, որոնք մինչ ցարդ կը բնակին նոյն հողերու վրայ), կը կարծուի որ Արաբներու այս գաղթով, Քիւրտ ցեղը ունեցած է և արաբական խառնուրդ ։ Ինչ ալ որ ըլլին այս բարդ հանգամանքները, ատոնց մէջ որոշ կը պատկերանայ Հայերու Քաղաքակրթական ձեռներէցութիւնը աւազակ և Թափառաշրջիկ ցեղերուն համար (*) ։*

Արիոփարզանի ժամանակ. — *«Ըստ օտար պատմիչներու՝ Հռովմայեցիք Հայերը սիրաշահելու համար, Հայ Նախարարներու հաւանութեամբ Արիոփարզանը (Մար) կը Թագաւորէ Հայոց ։ Այս պարագային մէջ Հայ ժողովուրդը կ՚ըմբոստանայ և կը մերժէ զայն ։ Այս կտորին մէջ արդէն Նախարարութեանց և ժողովուրդի հայեցակէտերու բաժանումն է որ կը տեսնենք. Նախարարութիւնները, Հռովմայեցիները, ետեւ են իշխանու-*

(*) *Քիւրդերը կամովին կը պնդեն որ իրենք սերած են Արաբներէ, և կարելի է հաւատալ արդարև, որ իրենց գլխաւորներու որոշ Թիւ մը կը պատկանի այս աշխարհակալ ցեղին ։*

«Nouvelle Géographie universelle. page 348. par Elisée Reclus